

ՌՌՒՍՕ-ՅԻՒՐԲ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՅ ՇԷՅԻ ՌԻՊԷՅՏՈՒԼԼԱԶ ԻՐՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Շէյխ Ուպէյտուլլահը Շըխական հին սերունդէ է, կը կոչուի Կէեյանիզատէ, սերունդին շարունակութիւնը կը հաշուեն մօտ 600 տարի: Իրենց այս նախնիքի վրայ պատմութիւններ կան, որ նա կը մերժէր Պաղտատի իշխողներու նուէրները՝ որոնք կը դրկուէին իրեն իշխողներուն, կողմնակից դառնալու համար, առարկելով թէ՛ անոնք կազմուած են հասարակ ժողովուրդի արիւնէն:

Այս ցեղը աւանդաբար պահպանելով իր մէջ ժողովրդական ոգւոյ այս առաքինութիւնը, ազոր հետեւանքով ալ մասամբ պահպաններ է և իր մեծութիւնն ու ազդեցութիւնը:

Այս ազդեցութեամբ էր որ Շէյխ-Ուպէյտուլլահը հրաւիրուած էր իբր կրօնա-դիմուորական գործիչ՝ Շամազխանէն-Ռուսօ-Թիւրք-Պարսկական սահմանազլխէն՝ մասնակցելու Ռուսներու դէմ ունեցած թիւրքերու պատերազմին՝ յիսուն հազար քիւրդ կուռուղներով:

Պատերազմէն յետոյ երբ վերաւորուած թիւրքիան պէտք ունէր կազդուրուելու, ուժովնալու նոր բարեկարգ միջոցներով ու առողջամիտ ուղղութիւններով, Սուլթան Համիտը աւելի կը բանար հին վէրքը դիմելով կրօնա-քաղաքականութեան:

Բիւրդ Շէյխերը այսպիսով կը դառնային քաղաքական ղեկավարներ՝ կազմակերպուած կերպով, երկրի մէջ ցեղ ցեղի վրայ հանելու ու ջեջելու համար:

Շէյխ Ուպէյտուլլահի օրով ծագեցաւ «Բրդական միութեան» հարցը, քաղաքական նոր-փուլի մը իբր սկիզբ: Սուլթան Համիտը կը կամենար պատմական Հայաստանի աշխարհազրական անուան տեղը փոխարինել կազմակերպուած նոր անուն «Բիւրդխտան»ով:

Շէյխ-Ուպէյտուլլահը կը հրաւիրուէր արչաւել Հայաստանի վրայ ու քար ու քանդ դարձնել այն: Բայց անցան այնպիսի